ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մարտի 2015 թվականի N 35-Ա

<<ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի N245-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N41- Ա որոշման 1-ին կետի, ***որոշում եմ***՝

1. <<Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 6352500 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 6352499 Հայաստանի Հանրապետության դրամով՝ հասարակ (սովորական) 385 բաժնետոմսի անվանական արժեքի և քանակի նվազեցման ճանապարհով: Արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը կկազմի 1/մեկ/ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ 1 /մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի նոյեմբերի 5-ի <<Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմադրման մասին>> N245-Ա որոշմամբ հաստատված <<Շինուհայրի

առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2. կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել <<Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մարտի 23

ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2015թվականի
մարտի 23-ի թիվ. 35- Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Ս. Բ[illegible]ի Դավթյան

Կազմված է23.03.2015թ. բաղկացած է 1 թերթից
ՕՐԻՆԱԿ - -
ԳՐԱՆՑՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 28.12.2007թ..
Գրանցման թիվ- 222.120.00910
Վկայական 03Ա 079179
ՀՎՀՀ 09211702
28.12.2007թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
« » ---------- 2015թ

«ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ »
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

1. «ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1/մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 1 հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1/մեկ/ դրամ:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության 28.12.2007թ գրանցված կանոնադրության փոփոխության բաղկացուցիչ մասը: